



**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ  
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ  
ԾԱՂԿԱԶԱՐԴԻ, ԱԻԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ԵՒ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ  
ՏՕՆԵՐՈՒ**

**Շաբաթ, 28 Մարտ, 2015 - ՏՕՆ ՂԱԶԱՐՈՒՅ ԅԱՐՈՒԹԵԱՆ**

Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Ս. Յակոբ Մայր Եկեղեցոյ արարողութեանց.-  
- Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւն, առաւօտեան ժամը 9:00-ին:  
- Կիրակնամուտքի Ժամերգութիւն, երեկոյեան ժամը 5:00-ին:

**Կիրակի, 29 Մարտ, 2015 - ԾԱՂԿԱԶԱՐԴ**

Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաշափառորէն Երուսաղէմ Մուտքի Ծաղկազարդի տօնին առիթով, Սուրբ Գեորգ Եկեղեցոյ մէջ պիտի Պատարագէ եւ Քարոզէ **ԳԵՐՇ. Տ. ՄԵՂՐԻԿ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԻՔԵԱՆ**  
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին  
Ս. Պատարագ, կէսօրուան ժամը 12:00-ին:  
Մանուկներու թափօր, յետմիջօրէի ժամը 1:30-ին:

**Կիրակի, 29 Մարտ, 2015 - ԴՌՆԲԱՑԷՔ**

Ս. Յակոբ Մայր Եկեղեցոյ մէջ, Դոնբասէքի արարողութիւն պիտի հանդիսապետէ եւ քարոզէ Առաջնորդ Սրբազան Հայրը, յետմիջօրէի ժամը 4:00-ին:

**Աւագ Երկուշաբթի, 30 Մարտ, 2015**

(Յիշատակն է՝ Անպտուղ Թզենիին, Արարչութեան եւ Մարդուն Ստեղծման)  
Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Ս. Յակոբ Մայր Եկեղեցոյ արարողութեանց.- Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւն, առաւօտեան ժամը 9:00-ին: Երեկոյեան Ժամերգութիւն, երեկոյեան ժամը 7:00-ին:

**Աւագ Երեքշաբթի, 31 Մարտ, 2015**

(Յիշատակն է՝ Տար Կոյսերուն եւ Վերջին Դատաստանին)  
Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Ս. Յակոբ Մայր Եկեղեցոյ արարողութեանց իսկ երեկոյեան պիտի Քարոզէ.- Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւն, առաւօտեան ժամը 9:00-ին: Երեկոյեան Ժամերգութիւն, երեկոյեան ժամը 7:00-ին:

**Աւագ Չորեքշաբթի, 1 Ապրիլ, 2015**

(Յիշատակն է՝ Յուդայի կողմէ՝ Քրիստոսի Մատնութեան)  
Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Ս. Յակոբ Մայր Եկեղեցոյ արարողութեանց.- Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւն, առաւօտեան ժամը 9:00-ին: Երեկոյեան Ժամերգութիւն, երեկոյեան ժամը 7:00-ին:

**Աւագ Հինգշաբթի, 2 Ապրիլ, 2015**

(Յիշատակն է՝ Վերջին Ընթրիքին եւ Ոտնկտային)  
Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Ս. Յակոբ Մայր Եկեղեցոյ արարողութեանց.- Կարգ Ապաշխարողաց, առաւօտեան ժամը 9:30-ին: Երեկոյեան Ժամերգութիւն, առաւօտեան ժամը 10:00-ին: Ս. Պատարագ, առաւօտեան ժամը 11:00-ին:

**Աւագ Հինգշաբթի, 2 Ապրիլ, 2015**

Ս. Յակոբ Մայր Եկեղեցոյ մէջ Ոտնկտայի արարողութիւնը պիտի կատարէ եւ քարոզէ Առաջնորդ Սրբազան Հայրը - Յետմիջօրէի ժամը 5:00-ին:

**Աւագ Հինգշաբթի, 2 Ապրիլ, 2015**

Ս. Գեորգ Եկեղեցոյ մէջ, Խաւարման արարողութեան պիտի հանդիսապետէ եւ քարոզէ Առաջնորդ Սրբազան Հայրը - Երեկոյեան ժամը 9:00-ին:

**Աւագ Ուրբաթ, 3 Ապրիլ, 2015**

(Յիշատակն է՝ Քրիստոսի Ձերբակալութեան, Դատավարութեան, Խաչելութեան, Մահուան եւ Թաղման)  
Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ մէջ, Խաչելութեան կարգին պիտի հանդիսապետէ Առաջնորդ Սրբազան Հայրը Առաւօտեան ժամը 9:00-ին:

**Աւագ Ուրբաթ, 3 Ապրիլ, 2015**

Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ մէջ, Թաղման Կարգին պիտի հանդիսապետէ եւ քարոզէ Առաջնորդ Սրբազան Հայրը յետմիջօրէի ժամը 3:30-ին:

**Աւագ Շաբաթ, 4 Ապրիլ, 2015**

(ՃՐԱԳԱՆՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ)  
Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ մէջ, Առաւօտեան Ժամերգութեանց պիտի հանդիսապետէ Առաջնորդ Սրբազան Հայրը, առաւօտեան ժամը 9:00-ին:

**Աւագ Շաբաթ, 4 Ապրիլ, 2015**

Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Յարութեան տօնին առիթով, Ճրագալոյցի Երեկոյեան, Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ մէջ պիտի Պատարագէ եւ Քարոզէ **ԳԵՐՇ. Տ. ՄԵՂՐԻԿ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԻՔԵԱՆ**  
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին  
Սկիզբ Ժամերգութեան, յետմիջօրէի ժամը 4:00-ին: Սուրբ Գիրքերէն ընթերցում, յետմիջօրէի ժամը 4:30-ին: Սուրբ Պատարագ, Երեկոյեան ժամը 5:30-ին:  
Ս. Պատարագի աւարտին, իրիկուան ժամը 8:00-9:00, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի ընդունի Ս. Յարութեան շնորհաւորութիւններ, Եկեղեցոյ Ներքնասրահին մէջ:

**Կիրակի, ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ, 5 Ապրիլ, 2015**

(ՅԻՇԱՏԱԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ)  
Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի Յարութեան տօնին առիթով, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ պիտի Պատարագէ եւ Քարոզէ **ԳԵՐՇ. Տ. ՄԵՂՐԻԿ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԻՔԵԱՆ**  
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին  
Սկիզբ Ժամերգութեան, առաւօտեան ժամը 9:00-ին:  
Սուրբ Պատարագ, առաւօտեան ժամը 10:30-ին:

Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի ընդունի Ս. Յարութեան շնորհաւորութիւններ, Ազգային Առաջնորդարանի Դահլիճին մէջ, յընթացք ընդունելութեան, Արուեստագէտ-Քանդակագործ Եւգեն Եփրեմեան Տը ԿրէՖ, Հայոց Ցեղասպանութեան 100-Ամեակին առիթով, Ազգային Առաջնորդարանին պիտի նուիրէ Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեանի քանդակը:

**Երկուշաբթի, 6 Ապրիլ, 2015**

Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Յարութեան տօնին առիթով, Ննջեցելոց Յիշատակին նուիրուած Սուրբ Պատարագ Պիտի մատուցուի Ս. Յակոբ Մայր Եկեղեցոյ մէջ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, առաւօտեան ժամը 8:00-ին:

\*\*\*

**ԾԱՂԿԱԶԱՐԴԻ, ԱԻԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ԵՒ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Յարութեան տօներուն առիթով, Թեմիս Եկեղեցիներուն մէջ պիտի մատուցուին Սուրբ եւ Անմահ Պատարագներ եւ կատարուին հանդիսաւոր արարողութիւններ, ձեռամբ Թեմիս մէջ ծառայող Միաբան Հայրերուն.-

\*\*\*

**Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ԾԱՂԿԱԶԱՐԴ**

Գերշ. Տ. Սուրէն Սրբազան Արքեպիսկոպոս Գաթարոյեան (Պատարագիչ եւ քարոզիչ)  
**ԽԱԻԱՐՈՒՄ**  
Գերշ. Տ. Սուրէն Սրբազան Արքեպիսկոպոս Գաթարոյեան (Հանդիսապետ եւ քարոզիչ)  
**ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ**  
Գերշ. Տ. Սուրէն Սրբազան Արքեպիսկոպոս Գաթարոյեան (Հանդիսապետ եւ քարոզիչ)

\*\*\*

**Ս. ԳԵՈՐԳ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ ՈՏՆԼՈՒԱՅ**

Գերշ. Տ. Սուրէն Սրբազան Արքեպիսկոպոս Գաթարոյեան (Հանդիսապետ եւ քարոզիչ)  
**ԶԱՏԻԿ-ՏՕՆ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ**  
Գերշ. Տ. Սուրէն Սրբազան Արքեպիսկոպոս Գաթարոյեան (Պատարագիչ եւ քարոզիչ)

\*\*\*

**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ ԾԱՂԿԱԶԱՐԴ**

Գերշ. Տ. Խաժակ Սրբազան Արքեպիսկոպոս Յակոբեան (Պատարագիչ եւ քարոզիչ)

\*\*\*

**Ս. ՆՇԱՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ ԾԱՂԿԱԶԱՐԴ**

Հոգշ. Տ. Վարդան Արեղայ Թաշճեան (Պատարագիչ եւ քարոզիչ)  
**ԽԱԻԱՐՈՒՄ**  
Հոգշ. Տ. Վարդան Արեղայ Թաշճեան (քարոզիչ)  
**ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ**  
Հոգշ. Տ. Վարդան Արեղայ Թաշճեան (քարոզիչ)

\*\*\*

**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ ԶԱՏԻԿ-ՏՕՆ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ**

Գերշ. Տ. Խաժակ Սրբազան Արքեպիսկոպոս Յակոբեան (Պատարագիչ եւ քարոզիչ)